Մամլո հաղորդագրություն

2025-XXX-EN

Երևան, Հոկտեմբերի 28, 2025

EIB Global-ը 100 միլիոն եվրո է հատկացրել հայկական միկրո և փոքր բիզնեսներին աջակցելու համար

- **Եվրոպական կայուն զարգացման հիմնադրամի (EFSD+) կողմից աջակցվող այս ծրագիրը կվերավարկավորվի տեղական ֆինանսական հաստատությունների միջոցով՝ Գերմանահայկական հիմնադրամի աջակցությամբ:**
- **Ֆինանսավորումը կաջակցի Երևանից դուրս գործող բիզնեսներին, կանանց կողմից ղեկավարվող բիզնեսներին և կանաչ ներդրումներին:**
- **Ակնկալվում է, որ այս վարկից կօգտվեն մոտ 500 ձեռնարկություն, ինչը կնպաստի մոտ 14 000 աշխատատեղերի պահմանմանը:**

Եվրոպական ներդրումային բանկի զարգացման թևը՝ **EIB Global-ը**, ստորագրել է 100 միլիոն եվրոյի վարկային պայմանագիր Հայաստանի Կենտրոնական բանկի (ՀԿԲ) հետ՝ միկրո, փոքր և միջին ձեռնարկությունների (ՄՓՄՁ) և միջին կապիտալով ընկերությունների ֆինանսական հասանելիությունը մեծացնելու նպատակով: Պայմանագիրը, որը ստորագրվել է Երևանում Հայաստանի Կենտրոնական բանկի նախագահ Մարտին Գալստյանի և EIB Global-ի բաժնի ղեկավար Մարիոն Հոենիկեի կողմից, իրականացվում է Եվրոպական կայուն զարգացման հիմնադրամի (EFSD+) աջակցության շրջանակում:

Միջոցները կուղղվեն ՀՀկենտրոնական բանկի միջոցով և կտրամադրվեն համապատասխան ընկերություններին՝ մասնակից առևտրային բանկերի և վարկային կազմակերպությունների միջոցով: Կանխատեսվում է, որ Գերմանա-հայկական հիմնադրամի կողմից իրականացվող ծրագիրը կաջակցի մոտ 500 ձեռնարկությունների և կպահպանի մոտ 14 000 աշխատատեղ: Ֆինանսավորման առնվազն 45%-ը կուղղվի Երևանից դուրս գտնվող նախագծերի ֆինանսավորմանը, առնվազն 30%-ը՝ կանանց ձեռներեցության ֆինանսավորմանը, իսկ առնվազն 40%-ը՝ կանաչ նախագծերին:

Այս ռազմավարական գործընկերությունն ընդգծում է Եվրոպական Միության հանձնառությունը՝ խթանելու տնտեսական աճը, դիմակայունությունը և կայուն զարգացումը Հայաստանում՝ ստեղծելով ավելի լուսավոր ապագա երկրի միկրո, փոքր և միջին ձեռնարկությունների և միջին կապիտալի ընկերությունների համար: Այն նաև համահունչ է Հայաստանի դիմակայունության և աճի ծրագրին, որը ներկայացվել է նախագահ Ուրսուլա ֆոն դեր Լայենի կողմից՝ 2024 թվականի ապրիլին, մասնավորապես ծրագրի երկրորդ առաջնահերթությունը՝ ներդնելով կապի ապահովման և բիզնեսների ոլորտներում:

Այս գործարքը հիմնվում է ՀՀ կենտրոնական բանկի միջոցով տրամադրված Եվրոպական ներդրումային բանկի նախորդ չորս վարկային գծերի վրա ՝ ընդհանուր 220 միլիոն եվրոյի չափով, որոնք ընդլայնել են հայաստանյան միկրո, փոքր և միջին ձեռնարկությունների (ՄՓՄՁ) ֆինանսավորման հասանելիությունը և ամրապնդել տնտեսական դիմակայունությունը:

Եվրոպական հանձնաժողովի DG ENEST-ի Արևելյան հարևանության և Թուրքիայի հարցերով տնօրենը նշել է.

«Հայաստանի ՄՓՄՁ-ների աջակցությունը մեկանգամյա նախաձեռնություն չէ. այն հանդիսանում է ԵՄ Դիմակայունության և աճի նախագծի հիմնաքարերից մեկը՝ նպաստելով կառուցել ավելի ուժեղ, ավելի բազմազան և ապագային պատրաստ հայկական տնտեսություն, ինչը վերջնականապես Հայաստանը ավելի է մոտեցնում Եվրոպական Միությանը»:

Հայաստանում ԵՄ դեսպան Վասիլիս Մարագոսը հավելեց.

«Եվրոպական ներդրումային բանկի այս ծրագիրը հնարավորություն կտա հարյուրավոր հայկական բիզնեսների ստանալ մատչելի ֆինանսավորում: Տարածաշրջանային զարգացման, գենդերային հավասարության և կանաչ նախագծերի վրա շեշտադրումը արտահայտում է մեր համատեղ առաջնահերթությունները և կիրառելի օգուտներ է բերում մարդկանց և համայնքների համար»:

ԵՆԲ փոխնախագահ Թերեզա Չերվինսկան, ով վերահսկում է Բանկի գործունեությունը Հայաստանում, ասել է.

«Այսօր, Եվրոպական Միության աջակցությամբ, մենք հինգերորդ վարկն ենք տրամադրում Հայաստանի Կենտրոնական բանկին, որը Եվրոպական ներդրումային բանկի արժեքավոր և վաղեմի գործընկեր է: Այս գործարքը նպատակ ունի ամրապնդել Հայաստանի տնտեսական դիմակայունություն՝ ապահովելով հուսալի ֆինանսավորում փոքր բիզնեսների համար՝ հատուկ ուշադրություն դարձնելով կին ձեռներեցներին և կանաչ նախաձեռնություններին: Աջակցելով սահմանափակ ֆինանսավորում ունեցող միկրո, փոքր և միջին ձեռնարկություններին՝ մեր ջանքերը կնպաստեն ավելի ներառական և կայուն տնտեսության ձևավորմանը ամբողջ Հայաստանում:»

Հայաստանի կենտրոնական բանկի նախագահ Մարտին Գալստյանը նշել է.

«Մեր համագործակցությունը Եվրոպական ներդրումային բանկի հետ զգալիորեն ընդլայնել է ֆինանսավորման հասանելիությունը հայկական ՓՄՁ-ների համար: Հաշվի առնելով Հայաստանի տնտեսական դիմակայունության ծրագրի հաջողությունը, որը հիմնականում աջակցել է արտադրության ոլորտի ՓՄՁ-ներին, կազմելով ընդհանուր ֆինանսավորման ավելի քան 70%-ը և ստեղծելով մոտ 1450 նոր աշխատատեղ, այս նոր 100 միլիոն եվրոյի վարկային ծրագիրն էլ ավելի կուժեղացնի մեր ջանքերը՝ ուղղված կանաչ նախագծերում ներդրումներ կատարող բիզնեսների աջակցությանը, կանանց տնտեսական մասնակցության խթանմանը և տարածաշրջանային զարգացմանը»:

Այս Ծրագրի շրջանակներում Հայաստանի Կենտրոնական բանկը միջոցներ կհատկացնի գործընկեր ֆինանսական կազմակերպություններին՝ համաձայն ծրագրի չափանիշների և նպատակների, ապահովելով ֆինանսավորման արդյունավետ տրամադրումը համապատասխան ՓՄՁ-ներին և միջին կապիտալով ընկերություններին ամբողջ Հայաստանում:

Նախապատմություն

EIB Global-ի մասին

Եվրոպական ներդրումային բանկը (ԵՆԲ) Եվրամիության երկարաժամկետ վարկային հաստատություն է, որը պատկանում է ԵՄ անդամ պետություններին: Այն ֆինանսավորում է ներդրումներ, որոնք նպաստում են ԵՄ քաղաքականության նպատակներին: EIB Global-ը ԵՆԲ խմբի մասնագիտացված ստորաբաժանումն է, որը նպատակ ունի բարձրացնել միջազգային

գործընկերությունների և զարգացման ֆինանսավորման ազդեցությունը: «Team Europe»-ի նախաձեռնության շրջանակներում EIB Global-ը խթանում է ամուր գործընկերություններ զարգացման ֆինանսական հաստատությունների և քաղաքացիական հասարակության հետ և ամբողջ աշխարհում իր գրասենյակների միջոցով ավելի է մոտեցնում EIB Group-ը մարդկանց, ընկերություններին և հաստատություններին: